թէ չհամարձակի՞ն խօսիլ զառաւելն։ Դատաւորն ասէ։ լռեա՛ անզգամ անպատկառ, ո՛վ ես դու որ համարձակիս բանալ բերան առաջի իմ։ Թէպէտեւ Նուրի կամէր զնա առաւել անպատուել, բայց պատկառէր 'ի Ժողովրդն, եւ զի մի արատաւորեսցի ինքն, վասն որոյ ասէ։ զվայելուչն լեզուի քո ասացեր, Ինչ արդ միմիայն ձեռամբ հարկանել։ ուրեմն հա՛ր, զի կատարեսցի։ Ոստիկանն ասէ։ ըզբազում Դատաւորս տեսեալ է մեր, բայց ոչ որպէս զքեզ։ և նորա բարկացեալ գոչեաց իբրեւ զառիւծ 'ի վերայ նորա, Զէլէպի, չհաւանեցա՞ր։ ինձ նման այր իմաստուն 'ի հարիւրաւոր ամս հազիւ տեսանի, և 'ի վերայ երկրի չէ ոք հաւասար ինձ։ և իբրեւ այսպէս զայրացեալ կագէին ընդ միմեանս, Քաղաքապետն կամեցեալ հանդարտել զնոսա։ ասէ։ մեք դատաւորք եւ պաշտօնեայք Տէրութեան, չէ օրէն կռուիլ յամօթ և 'ի նախատինս մեր սակս քրիստոնէից։ այլ տեսցուք թէ երկոքին ազգքն զինչ ասեն։ Դատաւորն ասէ, զինչ ունին ասել։ զի 'ի Պատրիարքէն Ցունաց գիր ինչ չէ եկեալ վասն դատին և զորպիսութենէ նորին, ուստի ոչ կամին տալ և առնել ինչ։ Գործակալք ասեն, Դատաւորդ չյարգեալ զգիր Արքայի, զայդ ասես՝ եւ լինիս ուսուցիչ։ 'ի հարկ է զօրացեալ դոցա 'ի բանից քոց, հակառակին և ոչ կամին։ Դատաւորն, տուք, եթէ տալոց էք ինչ։ Ցոյնք զրան Դատաւորին կրկնէին։ Ոստիկանն ասէ, զանհնազանդսն հրամանի Արքային ունիմ իշխանութիւն կապանօք տանել 'ի Դամասկոս։ Ցոյնք ասեն, չունիմք պէտս կապանաց, ինքնին երթամք տալ պատասխանի Կուսակալին։ Ոստիկանն, չերկնչի՞ք 'ի Թագաւորէն։ Ցոյնք, այո՛ երկնչիմք։ այլ առաւել յաղագէ մերմէ։ զի ոչ կարէ ազատել զմեզ 'ի յանդիմանութենէ նոցին։ Ոստիկանն, ուրեմն ազգն ձեր մեծ է քան զթագաւորն, և ցդատաւորն ասէր։ դու եղեր լեզու 'ի բերանս այդոցիկ վատ կեավուրաց։ ապա թէ ոչ զիա՞րդ համարձակէին դոքա զայդպիսիս բարբառել։ Փոխանորդն Ցունաց ասէ, Նիստ ծանր 'ի տեղի քում, զի չէ արժան խօսիլ 'ի Ժողովի աստ զբառդ վատ։ Ոստիկանն, ո՞վ արդեօք իցէք դուք զի յանդգնիք տալ զայդպիսի պատասխանի։ Փոխանորդն յարեաւ 'ի գնալ, և Քաղաքապետն իբր յանդիմանութիւն